վերջիններս այդ միջոցին մի մի աղուխ կապելով փեսացուի վզին շնորհաւորում են՝ «բարի առուտրով» [1]։

Հարսի գնման սովորութիւնը «բաշլըղի» եղանակով գոյութիւն ունի նաև Շիրակի գաւառում։ «Առաջարկութիւնները սրանք են. 100 մանէթ բաշլըղ, 5 հատ խալաթ, 1 թոփ լաւ Սալահանի շալ, մէկ մահուդ չուխացու, մէկ լաստիկ արխալուղցու, 12 գաղ դանավուզ ու մէկ սիւտ հախի, այսինքն կաթնազին» [2]։

Հարսի գնման այդ տեսակ սովորութիւններն այն աստիճան խորն են արմատացած մեր ժողովրդի բարքերում, որ մինչև օրս հնարաւորութիւն չի եղել միջոցներ ձեռնարկելու յիշեալ սովորութիւնից առաջացած ծանր հետևանքները, եթէ ոչ վերացնելու, գոնէ մեղմացնելու նպատակով։ Այդ փասատը իւր վոայ է գրաւել նաև հայ եկեղեցական վարչութեան ուշադրութիւնը։ 1902 թուականի յունիսի 14-ին և յուլիսի 4-ին Ախալցխայի ու Ախալքալաքի գաւառի բոլոր քահանաներից ժողովներ էին գումարուել գործակալ Ընձակ վարդապետի նախագահութեամբ, որպէսզի խորհրդակցեն այդ հարցի մասին։ «Մշակ» լրագրի Ախալքալաքի թղթակիցը հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս այդ մասին։ «Մեր գաւառի բոլոր հայ գիւղերում տիրող հաղէմասի, բաշլըղ կամ գլխագին անունով յայտնի տգեղ, անպատուաբեր և վերին աստիճանի վնասակար սովորութիւնն արմատախիլ անելու նպատակով, Ընձակ վարդապետը իւր վիճակի բոլոր քահանաներին երկու անգամ ժողովի հրաւիրեց... Նախագահը մի առ մի բացատրեց այն վնասները, որոնք առաջ են գալիս հաղէմասի սովորութիւնից, որ կայանում է աղջկան կամ այրի կնոջը փողով համարեա թէ գնելու կամ վաճառելու սովորութեան մէջ. յետոյ օրինակներ բերեց գաւառում տեղի ունեցող այդ ընտանեկան անհամաձայնութիւններից ու պառակտումներից, որոնք առաջ են եկել

[1] Անդ.

[2] Էմինեան Ազգագրական ժողովածու, հատ. Ա. եր. 239.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան